ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/157**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար անվտանգության համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/157 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

Փոփոխության նկարագրություն: 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝

- 2-րդ չափաբաժին՝ «Պղնձյա էլ.հաղորդալար ՊՊՎԳ 2*2,5 (220V): Ապրանքը պետք է լինի նոր՝ արտադրությունը ոչ պակաս քան 2022թ., չօգտագործված: Տեղափոխումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը»:
- 4-րդ չափաբաժին՝ «Լուսադիոդային լուսարձակ 100W: Գույնի ջերմաստիճան՝6500K, Աշխատունակության ժամ՝ 20,000 ժամ, Լարում՝ 180-265Վ 50/60 Հց, Պաշտպանության գործակից՝IP65: Ապրանքը պետք է լինի նոր՝ արտադրությունը ոչ պակաս քան 2022թ., չօգտագործված: Տեղափոխումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը»:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հայրապետյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)
Էլ. փոստ՝ l.hayrapetyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ